## ՍՏԵՂԾՈՒՄ ԵՆՔ ԱՊԱԳԱ՛Ն:

**Ավելին մարդահամարի մասին՝**
**STRANA2020.RU կայքում**

Լրացուցիչ տեղեկատվություն
ՀՄՀ մեդիագրասենյակ
E-mail: media@strana2020.ru
Հեռ. +7 (495) 933-31-94

Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության
դեսպանության հյուպատոսական բաժին.

+7 495 624-32-43 15:00-ից մինչև 17:00

Ռուսաստանի միգրանտների փեդերացիայի զանգերի կենտրոնի խորհրդատվություն՝
Ռուսաստանի Դաշնության միգրացիոն և աշխատանքային օրենսդրության հարցերով.

+7 (901) 578-32-88
+7 (963) 997-42-10
+7 (926) 130-75-00
E-mail: info@fmr-onine.ru



ВСЕРОССИЙСКАЯ
ПЕРЕПИСЬ
НАСЕЛЕНИЯ

# 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ (ՎԵՐԱԲԵՐՅԱԼ) 7 ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՑ

Հայաստանի Հանրապետության հարգելի՛ քաղաքացիներ:

2019-2021 թվականներին աշխարհի շատ երկրներում մարդահամարի հերթական փուլն է տեղի ունենում: Ռուսաստանը նույնպես մասնակցում է դրան: Համառուսական մարդահամարը տեղի կունենա 2021 թվականի աշնանը:

Այս բուկլետում ներառված են մարդահամարի հետ կապված ամենագլխավոր հարցերի պատասխանները:

## Ի՞ՆՉ Է ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ:

Համառուսական մարդահամարը 2021 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ երկրում գտնվող ողջ բնակչության հաշվարկն է, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների:

## Ե՞ՐԲ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ:

Մարդահամարը տեղի է ունենալու 2021 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 14-ը: Մասնակցել դրան հնարավոր կլինի երեք եղանակներից մեկով. պատասխանել հաշվառողի հարցերին, ինքնուրույն լրացնել մարդահամարի թերթիկը համացանցում կամ այցելել մարդահամարի ստացիոնար տեղամասը:

| | |
|---|---|
| Մարդահամար Gosuslugi.ru պորտալում | հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 8-ը |
| Հաշվառողների աշխատանք | հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 14-ը |
| Մարդահամարի ստացիոնար տեղամասերի աշխատանք | հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 8-ը |

## ԱՐԴՅՈ՞Ք ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ:

Ռուսաստանում գտնվող օտարերկրյա քաղաքացիները մարդահամարին մասնակցում են երկու դեպքում.

**Որպես Ռուսաստանի մշտական բնակիչներ.**

- եթե նրանք ժամանել են Ռուսաստան 12 ամիս կամ ավելի ժամանակով.
- եթե նրանք ժամանել են Ռուսաստան ապաստան փնտրելու նպատակով.
- եթե նրանք գտնվում են Ռուսաստանում և մշտական բնակության մեկ այլ վայր չունեն:

**Որպես Ռուսաստանում ժամանակավորապես գտնվող՝ այլ երկրների բնակիչներ.**

- եթե նրանք ժամանել են Ռուսաստան սովորելու կամ աշխատելու 12 ամսից պակաս ժամանակով.
- եթե նրանք մեկ այլ երկրում մշտական բնակություն ունեն և հոկտեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը գտնվում էին Ռուսաստանում՝ հանգստի, բուժման համար, որպես հյուր, տարանցման և այլ նպատակներով:

Մարդահամարի համար նշանակություն չունի այն փաստը, թե արդյոք անձն ունի իրավունք երկրում մնալու:

## Ի՞ՆՉ ԵՆ ՀԱՐՑՆՈՒՄ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Մարդահամարի ընթացքում հավաքագրվում են միայն անանուն տվյալներ: Անունները, ազգանունները, հասցեները չեն մուտքագրվում մարդահամարի թերթիկներում: Հաշվառողը գրի է առնում պատասխանները բացառապես ձեր խոսքերից: Դրանք փաստաթղթերով հաստատել պետք չէ:
Մարդահամարը անվտանգ և գաղտնի՛ է: Հավաքագրված տվյալներն օգտագործվում են միայն ամփոփ արդյունքներ ստանալու համար:

**Ռուսաստանի մշտական բնակիչների համար՝ մարդահամարի ամբողջական թերթիկը 25 հարցից**

Ռուսաստանում ժամանակավորապես գտնվող՝ այլ երկրների բնակիչների համար՝ կարճ ձևը 7 հարցից.

1. սեռը
2. երբ է ծնվել
3. մշտական բնակության երկիրը
4. Ռուսաստան ժամանելու նպատակը
5. Ռուսաստանում բնակության տևողությունը
6. ծննդյան երկիրը
7. քաղաքացիությունը



## Ի՞ՆՉՊԵ՞Ս ՃԱՆԱՉԵԼ ՀԱՇՎԱՌՈՂԻՆ:

Հաշվառողին կարելի է ճանաչել.

- վկայականով՝ անձնագրի հետ միասին ներկայացվող.
- կապույտ բանկոնով և շարֆով `մարդահամարի խորհրդանիշներով.
- Ռոսստատ մակագրությամբ թղթապայուսակով և մարդահամարի էլեկտրոնային թերթիկներով:

## ՀՆԱՐԱՎՈՐ Է ԱՐԴՅՈ՞Ք ՄԱՍՆԱԿՑԵԼ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ՝ ՉՀԱՆԴԻՊԵԼՈՎ ՀԱՇՎԱՌՈՂԻ ՀԵՏ:

Եթե չեք ցանկանում պատասխանել հաշվառողի հարցերին, ապա կարող եք ինքնուրույն հաշվառվել Gosuslugi.ru պորտալում: Դրա համար հարկավոր է գրանցվել այդ պորտալում:
Մարդահամարի թերթիկի հարցերին պատասխանելուց հետո դուք մարդահամարին մասնակցելու հաստատման կոդ կստանաք: Այն պետք է ցույց տալ հաշվառողին

## Ի՞ՆՉԻ ՀԱՄԱՐ Է ՊԵՏՔ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ:

Մարդահամարի տվյալները յուրաքանչյուր երկրի տնտեսության, սոցիալական ոլորտի և աշխատաշուկայի զարգացման հիմքն են հանդիսանում: Ձեր մասնակցությունը մարդահամարին՝ մեծ ներդրում է ընդհանուր գործում, ձեր կյանքը և ձեզ շրջապատող աշխարհը ավելի լավ և կատարյալ դարձնելու հնարավորություն է: